



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՍԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
Ալեք Մանուկյան 1, Երևան 375049, Հայաստանի Հանրապետություն  
հեռ. 597196

## ՏԵՂԵԿԱԹԵՐԹ 4 (հունիս 1992 թ.)

Լրացել է Հայկական Մաթեմատիկական Միության գործունեության մեկ տարին: Այդ ժամանակաշրջացքում զգալի աշխատանք է կատարվել, բայց անելիքների գերակշռող մասը դեռևս առցելում է: Մեփական տեխնիկական միջոցների բացակայությունը խոչընդոտում է Միության լիարժեք աշխատանքը, սակայն ավելի անհանգստացնում է անդամների ցածր ակտիվությունը: Միությունը ստեղծելիս գլխավոր գաղափարն էր համախմբել մաթեմատիկոս-անհագիներին, որոնցից յուրաքանչյուրը կարտահայտվեր ի օգուտ Միությանը և, վերջապես, ի օգուտ իրեն:

ԹԺԱՄԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ Մայիսի 26-ին (1992թ) Խորհրդի 5-րդ նիստում որոշվեց՝ ա) սահմանել անդամավճարների նոր չափը, բ) գրասենյակային աշխատանքների կատարումը ապահովելու նպատակով հրավիրել թղթավար-քարտուղարություն, գ) ձշգրտել արտասահմանցիների Միությունը ընդունվելու կարգը:

\* Նոյն օրը ժ.18.00 անց է կացվել ակադեմիկոս Արտաշես Շահինյանի 85-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ: Երեկոյի ընթացքում հիշողություններով կիսվեցին պրես. Ալեքսանդր Թալայյանը, Նորայր Առաքելյանը, Փիվիկոս Գոլդեն Հովհաննիսյանը: Իրենց հուշերը պատմեցին նաև պրես. Նորայր Ենգիբարյանը և Հանրի Ներսիսյանը: Ակադեմիկոս Շահինյանի գիտական աշխատությունների մասին վեճուցեց դոց. Խաչի Միքայելյանը, որին լրացրեց պրոֆ. Նորայր Առաքելյանը:

ԹԺԱՄԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵԿԱԹԵՐԹ "Տեղեկաթերթի" վերջին երկու համարները հավաքված էին IBM PC/AT համակարգչի վրա համալսարանի ՀԿ տնօրեն պրես. Գենադի Ռերպիկյանի հովանավորությամբ և ծրագրավորող օրդ. Գոհար Սահակյանի աջակցությամբ:

ԹԺԱՄԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ Հունիսի 23-ին (Երեքաթթի), ժ.17.00 տեղի կունենա ՀՄՄ Խորհրդի նիստը հետևյալ օրակարգով. ա) նոր անդամների հաստատում, բ) ՀՄՄ մրցանակների հիմնադրում, գ) Միության առաջիկա (հետարձակուրդային) անելիքների ըննարկում:

\* Նոյն օրը ժ.18.00 նշանակված է ՀՄՄ ընդիհանուր գիտական նիստ: Զեկուցող՝ գոկտոր Շուրա Բողոյան (Ճարտարագիտական համալսարան)

## ԴԻՍԿՐԵՏ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՀԱՆՐԱՀԱՆՎԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրավիրվում են ՀՄՄ բոլոր անդամները:

Թի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ Հայտնում ենք, որ այս տարվա փոքրագույն մուծումն է 50ո (գումարած 25ո մուտքի համար, եթե դեռ չի մուծված): Խեղրում ենք բոլորին պարտերը մարել ատենապետ Վ. Օհանյանի մոտ (համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի հավանականությունների տեսության ամբողություն կամ ընդհանուր նիստի ժամանակ կամ ել փոստով): Միշոյների սղության պարզաբնուկ "Տեղեկաթերթի" հաջորդ համարը կրածանվի միայն պարզ չունեցող անդամներին:

\* Մտեղծում է ՀՄՄ անդամների և, ընդհանրապես, հայ մաթեմատիկոսների տվյալների բանկ: Խեղրում ենք լրացնել տվյալների թերթիկը և վերադասներ ՀՄՄ գրասենյակ, կցելով նրան անգերեն տարբերակը նոյն տեսքով առանձին թղթի վրա:

ԹՀԱԿԵԼՎԱԾ Այս համարում շարունակում ենք հրապարակել ՀՄՄ դիմու և Խորհրդի կողմէ հաստատված անդամների ցուցակը (ըստ ներկայացված դիմումների ժամկետի): Տվյալների փոփոխությունների դեպքում խնդրում ենք տեղեկացնել Միության գրասենյակ: